# ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻ

## ՌՈՒՍ ՊՐԱՒՈՍԼԱՒ ԵԿԵՂԵՑԻ

(Церк. Вѣст. №№ 27, 28)

Աղանդաւորութիւնը մանաւանդ բաբտիզմը զարգանում է *Տամբով նահանգում։ Բաբտիզմի համար աշխատում են առաւելապէս կանայք, որոնք մեծ մասամբ գրագէտ են և գաղտուկ հմտացել են իրանց կրօնի վարդապետութեանը. նրանք գրագիտութիւն սովորում են ոչ միայն դպրոցում, այլ և դպրոցից դուրս։ Աղանդաւոր կանանց հակադրելու համար թեմական իշխանութիւնը մտադրում է կանանց առանձին խմբեր պատրաստել եկեղեցական թեմական դպրոցները աւարտողներից։*

Եկեղեցական համախմբումներ *են կազմակերպում Սարատովի թեմում Հերմոգենն եպիսկոպոսի նախաձեռնութեամբ։ Համախմբումները կունենան գործունէութեան որոշ ծրագիր՝ հաստատուած հոգևոր իշխանութիւնից։ Այդ համախմբումների հիմնական նպատակը պէտք է լինի ծուխն ու ծխական քահանան՝ ժողովրդի մէջ կրօնական տրամադրութիւնը զարթեցնելու ու զօրացնելու, ժողովրդի մէջ կրօնական գիտութիւններ արմատացնելու և հաւատացեալների մէջ հոգևոր միութիւն առաջ բերելու համար։ Այդ համախմբումներին կարող են անդամակցել պրաւոսլաւները. կրօնական-բարոյական բնաբաններով զրոյցներ կը կազմուեն ժամերգութիւնից դուրս, իսկ կազմակերպութիւնը երբ զարգանայ՝ կը բացուեն կրթական հաստատութիւններ էլ, օրինակ, գրագարան ընթերցարաններ, դպրոցներ և էլն։*

*Այդէն առաջին համախմբումն կազմուել է Հերմոգէն եպիսկոպոսի նախագահութեամբ։ Ներկայ է եղել մեծ բազմութիւն հոգևորականներից և հասարակ ժողովրդից։ Հերմոգէն եպիսկոպոսը բացատրել է այս նոր*

*կազմակերպութեան նպատակն ու անելիքը, և ջերմ կոչ է արել ներկաներին աջակցել այս սուրբ գործին։*

Նովգորոդի տիրացուները պէտք է պատրաստուեն ծխական դպրոցներում կրօնուսոյց լինելու. *որի առիթով Ռուս Սրբ. Սինոդը որոշել է այս սեպտեմբերի 1-ից Նովգորոդի առաջնորդարանում բանալ երկամեայ դասընթացք, ուր երկդասեան եկեղ. դպրոց յաջող աւարտող տիրացուները առանց քննութեան կընդունուեն։ Կարևորութիւն է տրուում եկեղեցական երգեցողութեան։ Ուրիշ եկեղեցական դպրոցների ստորին դասարաններից դուրս եկողներն էլ կընդունուեն՝ երկդասեան եկեղ. դպրոցի դասընթացքի, մանաւանդ երգեցողութեան, լրիւ քննութիւն տալուց յետոյ։*

Հաւատի խնդիրների եւ քրիստոնէական կեանքի *մասին ընտիր հատուածքի* (хрестоматія) *հրատարակութիւնը անհրաժեշտ է համարում «Մոսկվայի Հոգևոր Դատարանի Ջանադիր Ընկերութեան կրօնուսոյցների բաժանմունքը, և մտադիր է 1911—12 դպրոցական տարուայ սկզբից ձեռնամուխ լինել պատրաստելու և հրատարակելու այն։ Ընտիր հատուածքի նպատակը պէտք է լինի ոչ միայն լաւ և օգտակար միջոց պարզաբանելու, հատատելու, և լրացնելու կրօնուսոյցի դասերը, այլ և տալ հետաքրքիր գրական նիւթ ինքնակրթութեան համար կրօնական-բարոյական տեսակէտով։*

*Այդ նպատակին հասնելու համար մտադրութիւն կայ ի նկատի ունենալ եղած գրականութիւնը ընդարձակ չափով, և նրանից ընտրել բովանդակութեան և ձևի կողմից ամենակարևորները։*

---

Կրօնաւորները ու կրօնաւորուհիները կոչուում են վաստակելու Կարմիր խաչի համար։ *Այս նպատակով Կարմիր Խաչի Գլխաւոր Վարչութիւնը օրինագիծ է մշակել, և Սրբ. Սինոդը, որի եզրակացութեանն էր յանձնուած օրինագիծը,*

իւր հաւանութիւնը տալով խոստացել է Կարմիր Խաչին իւր աջակցութիւնը։

Կրօնաւորուհիների եւ կրօնաւորների նախապատրաստութիւնը Կարմիր Խաչին ծառայելու։

Կրօնաւորուհիներին նախապատրաստելու համար վճռուած է կանանց վանքերում, առաւելապէս այն տեղերում, ուր կան հիւանդանոցներ, բանալ գթութեան քոյրերի դասընթացքներ։ Այսպիսի առաջին դասընթացքը բացուելու է Մոսկվայի Պոկրովեան և Պետերբուրգի Վօսկրեսենսկեան կուսանաց վանքերում։ Կարմիր Խաչը մտադիր է մի օրինադիծ մշակել կրօնաւորներին էլ Կարմիր Խաչի աշխատանքներին կոչել, որպէս գթութեան եղբայրներ։

---

## ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑԻՆ

### Սահմանադրական թիւրիմացի ճնշումներ։—

Կ. Պոլսոյ Յունաց Յոփակիմ Գ. պատրիարքը քրիստոնեաների դպրոցների համար թաքրիր է ներկայացրել Թուրքաց իրաւանց և դաւանութեանց նախարարներին շեշտելով այն դարաւոր արտօնութիւնները, որ քրիստոնեաները վայելում էին Օսմանեան կայսրութեան մէջ դպրոցական գործում։ Այդ արտօնութիւնները անձեռնմխելի մնացին մինչև անգամ Աբդիւլ-Համիդ արիւնարբուսութեան օրով, մինչդեռ այժմ, սահմանադրական Թուրքիայում երիտասարդ թուրքերի կառավարութեան օրով վտանգի են ենթարկուած և քրիստոնեաների դրութիւնը ամենևին չէ բարւոքուած։

«Այսպիսով, ասելցնում է Церк. Вѣст. (№ 27) տիեզերական պատրիարքի թաքրիրը բազմակողմանի կերպով հաստատում է քրիստոնեաների հին ժամանակից հետէ ինքնուրոյնութիւնը դպրոցական գործում և դեղեցիկ կերպով պաշտպանում է այդ ինքնուրոյնութիւնը։ Մնում է ցանկալի, որ Թուրքաց կառավարութիւնը դադարեցնի իւր